Պատմություն և մշակույթ 2024 № 21 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2024.21.2.099

The Role of Russia in the Settlement of the Azerbaijan-Artsakh Conflict

Stepan Hasan-Jalalyan
https://orcid.org/0009-0003-2567-7456
YSU Faculty of History, Chair of History of Neighboring Countries of Armenia
Hasan-Jalal@yandex.com

Keywords: Russia, South Caucasus, Republic of Artsakh, Armenia, OSCE Minsk Group, Kashatakh, Almaty, Meindorf, Laquila, France.

The purpose of the article, based on the sources related to the issue, is to find out the role of Russia in ensuring security in the South Caucasus in the context of the settlement of the Azerbaijani-Artsakh conflict.

The article is written by means of a comparison and comparative study of relevant documents and examination analysis.

As a result of the joint examination of facts and documents related to the issue, we came to the conclusion that after the third Azerbaijani-Artsakh war, official Moscow radically revised its approach to the settlement of the Azerbaijani-Artsakh conflict, recording a setback in terms of the expectations of one of the parties to the conflict, Artsakh.

Russia, as a traditional regional mediator, through whose mediation negotiations took place between Armenia and Azerbaijan on issues related to both the Azerbaijan-Artsakh conflict and the settlement of relations between Armenia and Azerbaijan, failed to offer mutually acceptable solutions to the conflicting parties.

Ռուսաստանի դերը Ադրբեջան-Արցախ հակամարտության կարգավորման գործում

Ստեփան Հասան-Ջալալյան
ԵՊՀ պատմության ֆակուլտետ, Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի հայցորդ

Հիմնաբառեր ՝Ռուսաստան, Հարավային Կովկաս, Արցախի Հանրապետություն, Հայաստան, ԵԱՀԿ Մինսկի խումբ, Քաշաթաղ, Ալմա-Աթա, Մայնդորֆ, Լակվիլա, Ֆրանսիա:

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 99-108.

Received: 15.09.2024
Revised: 06.10.2024
Accepted: 20.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

The Role of Russia in the Settlement of the Azerbaijan-Artsakh Conflict

Ռուսաստանի դերը Ադրբեջան-Արցախ հակամարտության կարգավորման գործում

Հոդվածի նպատակն է, հիմնվելով հարցին վերաբերող աղբյուրների վրա, պարզել Ռուսաստանի դերը Հարավային Կովկասում անվտանգության ապահովման գործում ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորման համատեքստում:

Հոդվածը շարադրված է համապատասխան փաստաթղթերի համադրման, համեմատական ուսումնասիրության ու քննական վերլուծության մեթոդներով:

Հարցին վերաբերելի փաստերի ու փաստաթղթերի համադիր քննությամբ հանգել ենք այն եզրակացության, որ Ադրբեջան-Արցախ երրորդ պատերազմից հետո պաշտոնական Մոսկվան արմատապես վերանայել է իր մոտեցումն ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորման վերաբերյալ՝ գրանցելով հետընթաց հակամարտության կողմերից մեկի՝ Արցախի սպասելիքների տեսանկյունից:

Ռուսաստանին՝ որպես տարածաշրջանային ավանդական միջնորդի, որի միջնորդությամբ նույնպես Հայաստանի ու Ադրբեջանի միջև տեղի են ունեցել բանակցություններ ինչպես ադրբեջանաարցախյան հակամարտության, այնպես էլ Հայաստանի ու Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորմանն առնչվող հարցերի շուրջ, չի հաջողվել հակամարտող կողմերին առաջարկել խնդրահարույց հարցերի շուրջ փոխընդունելի լուծումներ:

Роль России в урегулировании Азербайджан-Арцах конфликта

Степан Асан-Джалалян

Исторический факультет ЕГУ, кафедра истории сопредельных с Арменией стран

Ключевые слова*:* Россия, Южный Кавказ, Республика Арцах, Армения, Минская группа ОБСЕ, Кашатах, Алма-Ата, Майндорф, Лаквила, Франция.

Цель статьи, заключается в том, чтобы выявить роль России в обеспечении безопасности на Южном Кавказе в контексте урегулирования Азербайджан-Арцах конфликта.

Статья написана путем сопоставления, сравнительного и экспертного анализов соответствующих документов.

В результате совместного изучения фактов и документов по данному вопросу мы пришли к выводу, что после третьей азербайджано-арцахской войны официальная Москва радикально пересмотрела свой подход к урегулированию Азербайджан-Арцах конфликта, зафиксировав неудачу с точки зрения ожиданий одной из сторон конфликта – Арцаха.

Россия как традиционный региональный посредник, при посредничестве которого велись переговоры между Арменией и Азербайджаном как по Азербайджан-Арцах конфликту, так и по вопросам, связанным с урегулированием отношений между Арменией и Азербайджаном, не смогла предложить конфликтующим сторонам взаимоприемлемые решения.

* * *

Ներածություն: Հոդվածի նպատակն է, հիմնվելով հարցին վերաբերելի աղբյուրների վրա, պարզել Ռուսաստանի դերը Հարավային Կովկասում անվտանգության ապահովման գործում Ադրբեջան-Արցախ հակամարտության կարգավորման համատեքստում:

Հոդվածը շարադրված է համապատասխան փաստաթղթերի համադրման, համեմատական ուսումնասիրության ու քննական վերլուծության մեթոդների կիրառմամբ:

Թե՛ Հարավային Կովկասում իր քաղաքական ու դրանից բխող այլ բնույթի ներկայությամբ, թե՛ Հայաստանի հետ ունեցած հարաբերությունների, թե՛ ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորման հարցում ունեցած դերակատարության առումներով Ռուսաստանը տարածաշրջանում ունի երկար տարիների դերակատարության պատմություն:

Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս Ռուսաստանը Հարավային Կովկասը դիտում է որպես իր աշխարհաքաղաքական շահերի սպասարկման տարածք: Նման մոտեցումն ունի պատմական ենթատեքստ: Ռուսաստանը Հարավային Կովկասը համարում է պատմականորեն իր ազդեցության գոտին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կովկասը, մասնավորաբար Հարավային Կովկասը, վերջին ավելի քան երկու հարյուր տարիների ընթացքում եղել է Ռուսական կայսրության մաս:

Հարկ է նշել, որ Հարավային Կովկասում անվտանգության ապահովման առումով ընդհանրապես, Հայաստանի անվտանգության ապահովման առումով մասնավորապես Ռուսաստանը, ի տարբերություն տարածաշրջանում շահեր ու հետաքրքրություններ ունեցող այլ երկրների, ունի իրավական ակտերով ամրագրված պարտավորություններ [«Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագիր, «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» 1995 թ. մարտի 16-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրություն N 5, Декларация о дружбе и стратегическом партнёрстве между Азербайджанской Республикой и Российской Федерацией]:

Ռուսաստանը զգալի դերակատարություն է ունեցել նաև ադրբեջանաարցախյան երեք պատերազմների դադարեցման գործում: Թե՛ 1991-1994 թթ. տեղի ունեցած ադրբեջանաարցախյան առաջին պատերազմը, թե՛ 2016 թ. ապրիլի 2-5-ը տևած Քառօրյա պատերազմը և թե՛ 2020 թ. սեպտեմբերի 27-նոյեմբերի 9-ը տևած 44-օրյա պատերազմը դադարեցվել են Ռուսաստանի միջնորդության արդյունքում:

Ադրբեջան-Արցախ երրորդ պատերազմի առաջին օրերից սկսած և դրա ընթացքում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները առանձին-առանձին ու համատեղ փորձեր են ձեռնարկել դադարեցնելու պատերազմը [Заявление президентов России; США и Франции по Нагорному Карабаху; Заявление Президента Российской Федерации; ՀՀ ԱԳՆ հայտարարությունը; U.S.-Armenia-Azerbaijan Joint Statement; ԱՄՆ-Հայաստան-Ադրբեջան համատեղ հայտարարություն]:

Սակայն բոլոր կոչերն ու հայտարարությունները (անգամ նրանք, որոնց միացել է նաև Ադրբեջանը) որևէ ազդեցություն չեն ունեցել Ադրբեջանի ագրեսիվ հռետորաբանության ու

գործողությունների վրա: Վերջինս չի դադարեցրել ռազմական գործողություններն ընդդեմ Արցախի Հանրապետության:

Սակայն Ռուսաստանի Դաշնության նախագահի շարունակաբար գործադրած ջանքերի արդյունքում 2020 թ. նոյեմբերի 9-ին Հայաստանի, Ռուսաստանի ու Ադրբեջանի միջև ստորագրվել է հայտարարություն, որով հայտարարվել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում բոլոր ռազմական գործողությունների ու կրակի ամբողջական դադարեցման մասին:

Համաձայն հայտարարության՝ Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած ագրեսիայի հետևանքով Ադրբեջանի կողմից բռնազավթված (օկուպացված) Արցախի Հանրապետության սահմանադրորեն ամրագրված տարածքներից բացի՝ Ադրբեջանի վերահսկողությանն են հանձնվել նաև 1991-1994 թթ. ադրբեջանաարցախյան առաջին պատերազմի արդյունքում Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի կողմից ազատագրված ու պատմականորեն ու իրավունքի ուժով Արցախի Հանրապետությանը պատկանող, սակայն խորհրդային շրջանում ապօրինաբար Խորհրդային Ադրբեջանի կազմ մտցված Քարվաճառի, Քաշաթաղի ու Ակնայի շրջանները, իսկ Արցախի Հանրապետությունում շփման գծի երկայնքով ու Քաշաթաղի (Լաչինի) 5կմ լայնությամբ միջանցքի երկայնքով տեղակայվել է ռուսական մոտ 2000-հոգանոց խաղաղապահ զորախումբ [Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации; Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը]:

Իր միջնորդությամբ հասնելով 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության ստորագրմանը՝ Ռուսաստանը, այդպիսով, վերահաստատել է հարավկովկասյան տարածաշրջանում իր առաջատար դիրքերը:

Պաշտոնապես համարվելով Հայաստանի ռազմավարական դաշնակիցը՝ Ռուսաստանը, ի տարբերություն Թուրքիայի, որը բազմիցս բացահայտ հայտարարել է ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորման գործընթացում Ադրբեջանին անվերապահորեն աջակցելու մասին, հակված է իրեն տեսնելու Հայաստանի ու Ադրբեջանի միջև միջնորդի դերում:

2022 թ. դեկտեմբերի 12-ից Ադրբեջանը, կոպտորեն խախտելով 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթները, արգելափակել է Արցախի Հանրապետությունն ու Հայաստանի Հանրապետությունը միմյանց կապող միջպետական մայրուղու՝ ռուսական խաղաղապահ զորակազմի պատասխանատվության տիրույթում գտնվող Շուշի-Քարին տակ ճանապարհահատվածը [Արցախի տեղեկատվական շտաբ]:

Իսկ 2023 թ. ապրիլի 23-ից Ադրբեջանը Քաշաթաղի միջանցքի Հակարիի կամրջի հարակից հատվածում տեղադրել է ապօրինի անցակետ [Արցախի տեղեկատվական շտաբ]: Հարկ է նշել, որ նման անցակետի տեղադրում նախատեսված չէ 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարությամբ:

Ավելի քան ինը ամիս տևած շրջափակման միջոցով Արցախի Հանրապետության ժողովրդին սովահար անելուց ու հումանիտար սուր ճգնաժամ առաջացնելուց հետո՝ 2023թ. սեպտեմբերի 19-ին, Ադրբեջանը, կոպտորեն խախտելով 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարությունը, չորրորդ անգամ դիմելով ագրեսիայի, երկօրյա պատերազմի ընթացքում օկուպացրել է Արցախի

Հանրապետության սահմանադրորեն ամրագրված տարածքի մնացած մասը՝ ցեղասպանության ենթարկելով Արցախի հայության մի մասին, իսկ մեծ մասը՝ ավելի քան 100.000 մարդ, բարեբախտաբար, մազապուրծ փրկվել է ցեղասպանությունից՝ վտարվելով իր բնօրրանից [Հայաստանի Հանրապետության Կառավարության պաշտոնական ինտերնետային կայք; European Parliament resolution of 5 October 2023 on the situation in Nagorno Karabakh after Azerbaijan's attack and the continuing threats against Armenia (2023/2879(RSP))], որտեղ ապրել է մոտավորապես երեք հազարամյակ անընդմեջ:

Պետք է նաև նշել, որ Ադրբեջան-Արցախ երրորդ պատերազմի ավարտից հետո Ռուսաստանն արմատապես փոխել է իր դիրքորոշումն ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորման առնչությամբ:

2023 թ. մարտի 20-ին՝ Մոսկվայում ՀՀ արտգործնախարարի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ, Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը, մասնավորապես, հայտարարել է. «*Կան նորագույն պատմության օրինակներ: Մոտավորապես այդ մասին խոսվել է Մինսկի պայմանավորվածություններում. ի՞նչ իրավունքներ պետք է ունենան Ուկրաինայի արևելյան մասի բնակիչները՝ համաձայն այդ նույն Մինսկի համաձայնագրերի. դա մայրենի լեզվի իրավունքն է, երեխաներին սովորեցնել այդ լեզվով, ապրել, աշխատել՝ օգտագործելով այն, պահպանել իրենց մշակույթը, կրոնը, ունենալ տեղական ինքնակառավարման հնարավորություն և ունենալ հատուկ տնտեսական և առևտրային կապեր իրենց հայրենակիցների հետ (Դոնբասի դեպքում դա Ռուսաստանն էր):*

Մոտավորապես նույն իրավունքները նախատեսված էին տասը տարի առաջ Բելգրադի ու Պրիշտինայի միջև «Կոսովոյի սերբական տեղական ինքնակառավարման մարմինների համայնքի ստեղծման մասին համաձայնագրում»՝ լեզու, տեղական ինքնակառավարում, կրթություն, մշակույթ, կրոն, հատուկ տնտեսական կապեր Սերբիայի հետ: Ղարաբաղցիներին անհրաժեշտ կլինի իրավունքների նույն փաթեթը, ինչ ցանկացած նմանատիպ իրավիճակում՝ Դոնբաս, Կոսովո ու Կոսովոյի սերբական շրջաններ, Լեռնային Ղարաբաղ (Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների կողմից 1991 թ. դեկտեմբերի 21-ի «Ալմա-Աթայի հռչակագրի» դրույթներին հավատարմության հաստատման համատեքստում)» [Выступление и ответы на вопросы СМИ Министра иностранных дел Российской Федерации С.В.Лаврова в ходе совместной пресс-конференции с Министром иностранных дел Республики Армения А.С.Мирзояном по итогам переговоров, Москва, 20 марта 2023 года]:

Ս. Լավրովի հայտարարությունը նկատի առնելով՝ հարկ է նշել հետևյալը: Ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորման վերաբերյալ 2008 թ. նոյեմբերի 2-ին Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահները մերձմոսկովյան Մայնդորֆ ամրոցում համատեղ ստորագրել են հռչակագիր, որում կողմերը, մասնավորապես, արձանագրել են, որ.

- ադրբեջանաարցախյան հակամարտությունը պետք է կարգավորվի քաղաքական ճանապարհով՝ «*…միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների և այդ շրջանակներում ընդունված որոշումների ու փաստաթղթերի հիման վրա…*»,
- «*հաստատում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդական ջանքերի շարունակման կարևոր նշանակությունը*» [«Մայենդորֆի հռչակագիրը». տեքստ՝ ստորագրված Սերժ Սարգսյանի, Իլհամ Ալիևի և Մեդվեդևի կողմից]:

Սա եզակի փաստաթուղթ է: 1994 թ. մայիսի 9-11-ի ընթացքում՝ եռակողմ (Արցախ, Հայաստան, Ադրբեջան) համաձայնագրի ստորագրումից 14 տարի անց, Հայաստանն ու Ադրբեջանն առաջին անգամ համատեղ ստորագրել են ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորման վերաբերյալ փաստաթուղթ, որը ստորագրել է նաև Ռուսաստանը:

Այսինքն՝ Ռուսաստանը ճանաչել և ընդունել է, որ ադրբեջանաարցախյան հակամարտությունը պետք է կարգավորվի «*…միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների և այդ շրջանակում ընդունված որոշումների ու փաստաթղթերի հիման վրա…*»:

Հետևաբար 2023 թ. մարտի 20-ին Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովի հնչեցրած հայտարարությունն արցախահայությանը տրվելիք իրավունքների մասին հակասում է «Մայնդորֆյան հռչակագրում» ամրագրված դրույթներին:

2009 թ. հուլիսի 10-ին՝ Իտալիայի Լակվիլա քաղաքում հրավիրված մեծ ութնյակի գագաթնաժողովին, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարները՝ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման, Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևն ու Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին, ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորման վերաբերյալ հանդես են եկել համատեղ հայտարարությամբ՝ ընդունելով, որ հակամարտությունը պետք է կարգավորվի Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքների համաձայն: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ուժի չկիրառման, ժողովուրդների հավասար իրավունքների ու ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքներին [Statement by the OSCE Minsk Group Co-Chair countries, L'AQUILA]:

Այսինքն՝ Լակվիլայի հայտարարությամբ ևս Ռուսաստանը ճանաչել և ընդունել է, որ ադրբեջանաարցախյան հակամարտությունը պետք է կարգավորվի միջազգային իրավունքի սկզբունքների, մասնավորապես՝ ինքնորոշման իրավունքի սկզբունքի համաձայն:

Արցախահայությանը տրվելիք իրավունքների մասին Ս. Լավրովի վերոնշյալ հայտարարությունը հակասում է նաև Լակվիլայի հայտարարության մեջ արձանագրված դրույթներին:

Այսպիսով՝ Ռուսաստանի արտգործնախարարի վերոնշյալ հայտարարությունը դիտարկելով առնվազն նշված փաստաթղթերի՝ «Մայնդորֆյան հռչակագրի» և Լակվիլայի հայտարարության համատեքստում՝ կարող ենք պնդել, որ պաշտոնական Մոսկվան վերանայել է իր մոտեցումն ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորման վերաբերյալ՝ գրանցելով հետընթաց հակամարտության կողմերից մեկի՝ Արցախի սպասելիքների տեսանկյունից:

Արցախի կարգավիճակի փոխարեն արցախահայության իրավունքների ու անվտանգության հարցն առաջնահերթ համարելու մասին Ռուսաստանի արտգործնախարարի վերը նշված հայտարարությունը նկատի առնելով՝ կարող ենք պնդել, որ Ռուսաստանը, փաստորեն, հրաժարվել է արցախահայության ինքնորոշման իրավունքը պաշտպանող իր իսկ ստորագրած փաստաթղթերից:

Ռուսաստանը հրաժարվել է նաև ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորմամբ զբաղվելու միջազգայնորեն ճանաչված միակ մանդատն ունեցող ԵԱՀԿ Մինսկի խմբում աշխատելու հանձնառությունից [Выступление и ответы на вопросы СМИ в ходе совместной пресс-

конференции Министра иностранных дел России С.В.Лаврова и Министра иностранных дел Азербайджанской Республики Д.А.Байрамова по итогам переговоров; Пресс-конференция Министра иностранных дел Российской Федерации С.В.Лаврова по проблематике европейской безопасности, Москва, 1 декабря 2022 года]:

Չնայած ԵԱՀԿ Մինսկի խմբում աշխատելու հանձնառությունից հրաժարվելու մասին Ռուսաստանի պաշտոնական հայտարարություններին՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներ Ֆրանսիան ու ԱՄՆ-ն իրենց պատրաստակամությունն են հայտնել շարունակելու աշխատել Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում [Ֆրանսիան վերահաստատում է իր լիակատար հանձնառությունը որպես Մինսկի խմբի համանախագահ; Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Քրիստինա Քվինի 3.07.2023 թ. հարցազրույցը Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը; Դիտել հարցազրույցի 10 ր 52 վ – 11 ր 16 վ հատվածը]:

Ռուսաստանը նաև կրավորական կեցվածք է դրսևորել ինչպես բռնազավթիչ Ադրբեջանի կողմից Քաշաթաղի միջանցքի արգելափակման, այնպես էլ 2023 թ. սեպտեմբերի 19-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած չորրորդ զավթողական պատերազմի ժամանակ”:

Արցախի Հանրապետության շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ 2023 թ. հուլիսի 15-ին Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությունը հանդես է եկել հայտարարությամբ, որում, մասնավորապես, ասվում է. «*2022 թ. հոկտեմբերին ու 2023 թ. մայիսին Եվրամիության հովանու ներքո անցկացված գագաթնաժողովներում Հայաստանը ճանաչել է Լեռնային Ղարաբաղը որպես Ադրբեջանի տարածք: Մենք հարգում ենք Հայաստանի ղեկավարության ինքնիշխան որոշումը, սակայն դա արմատապես փոխել է այն հիմնարար պայմանները, որոնց ներքո ստորագրվել է Ռուսաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի ղեկավարների 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարությունը, ինչպես նաև տեղակայված ռուսական խաղաղապահ զորախմբի վիճակը տարածաշրջանում*» [Заявление МИД России в связи с ситуацией вокруг Нагорного Карабаха]:

Մեջբերված հատվածում պարզաբանման կարիք ունի հետևյալ ձևակերպումը. «*Սակայն դա արմատապես փոխել է այն հիմնարար պայմանները, որոնց ներքո ստորագրվել է Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարությունը*»:

Ի՞նչ պայմանների մասին է խոսքը: Նշված հարցի պատասխանը կարող է որոշակիորեն լույս սփռել բռնազավթիչ Ադրբեջանի կողմից Քաշաթաղի միջանցքի ապօրինի արգելափակման համատեքստում Ռուսաստանի Դաշնության կրավորական կեցվածքի վրա:

Հարցի պատասխանը գտնում ենք Ռուսաստանի Դաշնության նախագահի՝ Ադրբեջան-Արցախ երրորդ պատերազմի հետպատերազմյան իրավիճակի ու հարակից հարցերի վերաբերյալ 2020 թ. նոյեմբերի 17-ի հարցազրույցում:

Պատասխանելով Արցախի կարգավիճակի մասին հարցին՝ ՌԴ նախագահը, մասնավորապես, ասել է. «*Այո՛, նման խնդիր կա, Ղարաբաղի վերջնական կարգավիճակը չի կարգավորվել: Մենք պայմանավորվել ենք, որ պահպանելու ենք ստատուս քվոն, ներկա իրավիճակը: Թե ինչ կլինի հետո, պետք է որոշեն ապագայում կամ ապագա առաջնորդները՝ այս գործընթացի ապագա մասնակիցները: Բայց, իմ կարծիքով, եթե պայմաններ ստեղծվեն նորմալ կյանքի, Հայաստանի ու Ադրբեջանի միջև հարաբերությունների վերականգնման, մարդկանց միջև կենցաղային*

մակարդակով, հատկապես հակամարտության գոտում, դա պայմաններ կստեղծի Ղարաբաղի կարգավիճակը որոշելու համար» [Ответы на вопросы СМИ по ситуации в Нагорном Карабахе]:

Մեջբերումից պարզ է, որ Արցախի կարգավիճակի հարցը, ըստ ամենայնի, բանավոր պայմանավորվածության համաձայն, որոշվել է թողնել ապագային:

Սակայն փաստերի համադրումից պարզվում է, որ Հայաստանի Հանրապետության գործող ղեկավարը խախտել է Արցախի կարգավիճակն ապագայում որոշելու մասին 2020 թ. նոյեմբերին բանավոր կերպով ձեռք բերված եռակողմ՝ (Հայաստան, Ռուսաստան ու Ադրբեջան) պայմանավորվածությունը;

Այս ամենի հետ միաժամանակ հարկ է նշել, սակայն, որ նման պայմանավորվածության խախտումը չէր կարող և չպետք է հիմք հանդիսանար բռնազավթիչ Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության ապօրինի շրջափակման հարցում Ռուսաստանի Դաշնության կրավորական կեցվածքի համար, քանի որ «Արցախում ամբողջական հրադադարի ու բոլոր ռազմական գործողությունների ավարտի մասին» 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության 6-րդ կետի համաձայն՝ «*Լաչինի միջանցքը (5 կմ լայնությամբ), որը ապահովելու է Լեռնային Ղարաբաղի կապը Հայաստանի հետ,… մնում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի վերահսկողության ներքո*» [Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը; Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации]:

Հետևաբար նշված հայտարարությունը ստորագրած յուրաքանչյուր կողմ, այդ թվում՝ նաև Ռուսաստանի Դաշնությունը, պարտավոր է առանց որևէ նախապայմանի ու ամբողջական ծավալով կատարել հիշյալ փաստաթղթում արձանագրված իրեն վերաբերելի դրույթները:

Եզրակացություններ: Այսպիսով՝ վերոգրյալի հիման վրա կարող ենք պնդել, որ Ադրբեջան-Արցախ երրորդ պատերազմից հետո պաշտոնական Մոսկվան արմատապես վերանայել է իր մոտեցումն ադրբեջանաարցախյան հակամարտության կարգավորման վերաբերյալ՝ գրանցելով հետընթաց հակամարտության կողմերից մեկի՝ Արցախի սպասելիքների տեսանկյունից:

Ռուսաստանին՝ որպես տարածաշրջանային ավանդական միջնորդի, որի միջնորդությամբ նույնպես Հայաստանի ու Ադրբեջանի միջև տեղի են ունեցել բանակցություններ ինչպես ադրբեջանաարցախյան հակամարտության, այնպես էլ Հայաստանի ու Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորմանն առնչվող հարցերի շուրջ, չի հաջողվել հակամարտող կողմերին առաջարկել խնդրահարույց հարցերի շուրջ փոխընդունելի լուծումներ:

Գրականության ցանկ

ԱՄՆ-Հայաստան-Ադրբեջան համատեղ հայտարարություն, 25.10.2020, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2020/10/25/mf_st/10594:

Արցախի տեղեկատվական շտաբ, 12.12.2022,

https://www.facebook.com/ArtsakhInformation/posts/pfbid02J3SQfeTMdmg81WtkwcZoNbVc4BGJ96Yc4BYkeDqiNxz4WE1iBdjUJdpC6eKcxp7Ql:
Արցախի տեղեկատվական շտաբ, 23.04.2023,
https://www.facebook.com/ArtsakhInformation/posts/pfbid0221qpEY9jMW321BFrVwz4uhzn2yTtywsvRVE8SQdPKrWStTpZ66K3CtDWZTzuKmKNl:
Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Քրիստինա Քվինի 03.07.2023 թ. հարցազրույցը Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը,
https://www.youtube.com/watch?v=zMg8VDPACj0:
ՀՀ ԱԳՆ հայտարարությունը, 19.10.2020,
https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2020/10/19/mfa_arm_st/10544:
Հայաստանի Հանրապետության Կառավարության պաշտոնական ինտերնետային կայք, 4.10.2023, https://www.gov.am/am/news/item/15666/:
Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, 09.11.2020,
https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/:
«Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագիր, 16.03.1995, https://uic.am/wp-content/uploads/2015/01/paym-razmabaza-1995.pdf;
Մայենդորֆի հռչակագիրը. տեքստ՝ ստորագրված Սերժ Սարգսյանի, Իլհամ Ալիևի և Մեդվեդևի կողմից, https://www.aniarc.am/2019/03/03/mayendorf-text-armenian-2008/, 3.03.2019:
«Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին 1995 թվականի մարտի 16-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրություն N 5, 17.08.2010, https://www.azatutyun.am/a/2129949.html:
Ֆրանսիան վերահաստատում է իր լիակատար հանձնառությունը որպես Մինսկի խմբի համանախագահ, 12.04.2022, https://www.azatutyun.am/a/31798541.html:
Выступление и ответы на вопросы СМИ Министра иностранных дел Российской Федерации С.В.Лаврова в ходе совместной пресс-конференции с Министром иностранных дел Республики Армения А.С.Мирзояном по итогам переговоров, Москва, 20 марта 2023 года, https://mid.ru/ru/foreign_policy/news/1858773/.
Выступление и ответы на вопросы СМИ в ходе совместной пресс-конференции Министра иностранных дел России С.В.Лаврова и Министра иностранных дел Азербайджанской Республики Д.А.Байрамова по итогам переговоров, Баку, 24 июня 2022 года,
https://mid.ru/ru/foreign_policy/news/1819414/.
Декларация о дружбе и стратегическом партнёрстве между Азербайджанской Республикой и Российской Федерацией, 3.07.2008, http://kremlin.ru/supplement/250.
Заявление МИД России в связи с ситуацией вокруг Нагорного Карабаха, 15.07.2023,
https://www.mid.ru/ru/foreign_policy/news/1897041/.

Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации, 9.11.2020, http://kremlin.ru/events/president/news/64384.

Заявление президентов России, США и Франции по Нагорному Карабаху, 1.10.2020, http://kremlin.ru/events/president/news/64133?fbclid=IwAR1w9vSVgO29M0jnhlHZsd29TqaLyS0peEjeWyc7HV2h6PiFUoglzjRy5Bc.

Заявление Президента Российской Федерации, 8.10.2020, http://kremlin.ru/events/president/news/64180.

Ответы на вопросы СМИ по ситуации в Нагорном Карабахе, 17.11.2020, http://www.kremlin.ru/events/president/news/64431.

Пресс-конференция Министра иностранных дел Российской Федерации С.В.Лаврова по проблематике европейской безопасности, Москва, 1 декабря 2022 года, https://mid.ru/ru/foreign_policy/news/1841407/.

European Parliament resolution of 5 October 2023 on the situation in Nagorno Karabakh after Azerbaijan's attack and the continuing threats against Armenia (2023/2879(RSP)), 5.10.2023, https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2023-0356_EN.pdf.

Statement by the OSCE Minsk Group Co-Chair countries, L'AQUILA, 10.07.2009, https://www.osce.org/mg/51152.

U.S.-Armenia-Azerbaijan Joint Statement, 25.10.2020, https://2017-2021.state.gov/u-s-armenia-azerbaijan-joint-statement/.